

մը խօսելէ ետք շրջանաւարտ պարման-պարմանուհիներուն՝ պահպանիչով օրհնեց բոլորը:
Ս. Թարգմանչաց շարականով բացուած հանդէսը փակուեցաւ Ս. Աթոռոյ մաղթերով:

* * *

14 Յունիս, Կիրակի երեկոյ, ժառանգ. Վարժարանի մեծ սրահին մէջ, հրաւիրեալներու կողիկ բազմութեան մը ներկայութեան կայացաւ Ամալեքի Հանդէսը Վարժարանին:

Վերատեսուչ Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեան ըրաւ բացման խօսքը, անդրադառնալով պատճառներուն՝ որոնք պատասխանատուներն են վարժարանի ներկայ անշուք վիճակին: Կողիկ յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին սաները, արտասանութիւններով, ընթերցումներով եւ նուագածութեամբ:

Տեսուչ Տ. Գուսան Վրդ. Ալեանեան կարդաց միամեայ տեղեկագիրը վարժարանի տարուան մը կեանքին ու գործունէութեան:

Սարգիս Սրկ. Աւետիքեան եւ իր դասընկերը՝ Ուրարակիր Արմէն Ճումտուրեան ստացան իրենց վկայականները՝ աւարտած ըլլալով վարժարանի ընթացքը: Անոնք ընծայարան պիտի անցնին Սեպտեմբերին:

Իսկ Պատրիարք Սրբազանը պատշան յորդորականէ մը ետք օրհնեց բոլորը եւ յոյս յայտնեց որ վարժարանը յառաջիկային վերագտնէ այն մթնոլորտը որուն մէջ դաստիարակ մշակներու ջանքերը արդիւնաւէտ պիտի դառնան եւ իրենց բարի պտուղները տան:

«Հայր Մեր»ի երգեցողութեամբ փակուեցաւ ժամ մը տեւող աւանդական այս Հանդէսը:

Գ. Ա.

ՅԱՐԳԱՆՔ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՊԵՏՐՈՍ ԼԷՓԷՃԵԱՆԻ 60-ԱՄԵԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Օրհնութեան Կոնդակը, 16 Յունիս 1992, Երեւանի երեկոյեան յանձնուեցաւ Տիար Պետրոս Լեփեճեանին ի գնահատանք իբրեւ դաստիարակ իր 60-ամեայ ծառայութեան: Յարգանքի երեկոյթը տեղի ունեցաւ ժառանգաւորաց Վարժարանի Սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր: Յայտագրին մէջ բաժին առին Տիար Կարապետ Յակոբեան Բացման Խօսքով, Տիկին Նորա Նազգաշեան իբրեւ Հանդիսավար Յայտագրի, Երգչուհի Տիկին Շաֆէ Գալայեան դաշնակի ընկերակցութեամբ Պր. Վահէ Գալայեանի, ասմունքող Տիկին Անուշ Նազգաշեան: Յորելեարին անձը եւ գործը ներկայացուցին Գեոր. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան "Ուսուցիչ", Տիկին Արփինէ Նազգաշեան "Մարդը", Տիկին Ալին Պալեան "Գրողը", Պր. Յակոբ Գարակէօզեան "Ազգային Ծառայութիւնը":

Տիար Պետրոս Լեփեճեան իր շնորհակալութիւնը յայտնեց, իր տիկնոջ եւ իր ընտանիքին անունով, իրեն ընծայուած Հայրապետական Կոնդակին համար: Ամեն. Պատրիարք Սրբազանը Հայ Դաստիարակին ազգօգուտ եւ նուիրական ծառայութիւնը շնչտեց եւ գնահատեց Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեանի կողմէ Կոնդակին ընթերցումն յետոյ երեկոյթը փակեց օրհնութեամբ եւ "Հայր Մեր"ի խմբական երգեցողութեամբ: